№ 158 Սեպտեմբերի 10 (22) 1880 Սեպտեմբերի 10 (22) № 158

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք գրվում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ազգ օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսօրվայ լուրը:—Ներքին տեսութիւն: Նամակ Նուխուց: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Голосъ» լրագրի թղթակցութիւնը: Թիւրքիա: Հայերը Թիւրքիայի մէջ: Պատուիրների գրութիւնը: Նամակ Թիւրքիայից: Նամակ Թիւրքիայից:—«Մշակի» հեռագրիներ:—Ցայտարարութիւններ:

ԱՅՍՕՐՎԱՅ ԼՈՒՐԸ

Այս բոպէիս ստացանք մի մանրամասն հեռագիր Իգդիրից, որ և տպում ենք «Մշակի» ներկայ համարում: Հեռագիրը ասում է, որ լուր կայ, թէ Վանի հայերի մէջ ապատամբութիւն է ծագել, սպանված հայերի թիւը 70 հոգի են, թիւրքը սպանվածների թիւր դեռ ևս յայտնի չէ: Երկու կողմերն էլ լաւ զինաւորված են:

Ուրեմն թիւրքաց Հայաստանի զինեալ շարժման լուրը հաստատվում է:

Նոյն լուրերը արդէն հրատարակված էին դեռ այդ հեռագրի ստանալուց առաջ ռուսաց «Голосъ» և «Новое Время» լրագիրներում: Այդ վերջին թերթը իր օգոստոսի 24-ի համարի առաջնորդող յօդուածում համակրութեամբ է վերաբերվում դէպի թիւրքաց հայերի զինեալ շարժումը, ասելով որ ուրիշ կերպ անհնարին է թիւրքաց հայերին ստանալ իրանց ինքնավարութիւնը:

Մենք կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին ռուսաց թերթի առաջնորդող յօդուածի թարգմանութեան հետ:

Իսկ այժմ կը բաւականանանք կրկնելով որ ինչքան էլ տխուր լինի այն իրողութիւնը, թէ ճնշված ազգերը իրանց իրաւունքները ստանալու համար պէտք է անպատճառ զէնք բարձրացնեն և արիւն թափեն, բայց դժբաղդապէս ուրիշ ճանապարհ չը կայ այդ տեսակ ազգերի համար իրանց մարդկային իրաւունքները լուսաւորված աշխարհի առջև վկայելու համար:

Այժմ, երբ այդ բոլոր լուրերը կը ստուգվեն, հաստատ կարելի է ասել որ հայոց խնդիրը անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն կը ստանայ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Օգոստոսի 29

Տեսնում ես մի տեղ կոտրատած հարիւրի (տախտ) վրա նստած, կուռը ձեռքն ունած, ծրնոտը ափին աչքերը մի կէտի ձգած մտածում է մեր վաճառականը.... Արդեօք ինչ է մտածում, այն որ իր գումարը տասը քսան հազարին չը հասաւ, որ Մոսկվայի Մ-ի նման յիմարներից պատիւ ըստանար, թէ այն որ զգալով իր «բաների բուրմն վրնեը» օր առաջ ուզում է եղածը տակով անի», թուսանին մի քանի կօպէկ տալով իր պարտքերից ազատվի, ինչպէս որ Թիֆլիսում Զ.....ովը և Նուխում Տ. Ս.—Մ-ովն, թէ այն որ ազուլեցի Շ. Գ.-ազի Ե.-Մ-ի փողը տակով անելը, ժառանգներին զրկելը՝ այժմ հարիւր հազարի տէր դառնալ Թիֆլիսում Զ-խի քարվանսարայում խանութ բանալը մտաբերելով, ուզում է Մ.-ի ժառանգներին էլ իրը զրկի կամ սուտ իր պարտատէրի գրութեամբ մի ստացական շինի այն անպիտանի ձեռքից ազատվի, թէ այն որ նրա միտքը յանկարծ սլացաւ դէպի Հայաստան—այդ տանջանաց աշխարքը՝ տեսաւ իր հարազատների, եղբարների, քոյրերի վիճակը, հայի աղջկայ, կնոջ, մանուկի, ծերի, երիտասարդի, եկեղեցու, ուրվակի, գիւղի և արտերի դէմ քրդի անգթութիւնը, սովի տառապանքը, բռնութիւնները և խարդախութիւնները Թիւրքաց տէրութեան կողմից...

Փողի, վաճառականի մեկ Աստծու համար ինչ մտքեր, հուշարներ, կեղտոտ մէջոցներ, զոհեր ասես կանի մեր վաճառականը, բայց Աստուած մի արասցէ, ընթերցող, որ Հայաստան և հայի թշուառութիւնը նրա մտքով անցնի: Ինչ գրութեան մէջ է Հայաստանը, ով է Ներսէս պատրիարքը, ով Թրմանանը, ով Նուբար փաշան, ուր և ինչ է գործում իր հարենակից Կամսարականը, ինչ անշարժութեան մէջ է Էջմիածինը—այդ նրա գործը չէ: Նրա միտքը փողով է զբաղված, փող, փող. գիշերն էլ երազում դադար չունի շատ փող հաւաքելուց, էլի չը շարտանալուց:

«Ինչ նոր խաբար», հարցնում է վաճառականը իր նման պարապ վաճառականից: Պատասխանողը եթէ ճարպիկ է, կարող է իր այս ինչ ապրանքի վնասից, այն ինչ մարդու անկողնանկիցից, ստութիւնից, մէկին բամբասելով, միւսին անարգելով, երրորդին հայհոյելով հազար ու մի սուտ փչել, իսկ միւս վաճառականն էլ նրա ամէն մի խօսքին միամտաբար, կամ երբեմն առ երես, հաւանութիւն կը տայ, նրա շինծու պատմութիւններին երբեմն իրանն էլ կը կցէ—երկուսն էլ իրար զլուխ լաւ կնոջեն, կը սարեն, երեսանց ինչպէս երկու սրրատակիցներ, բարեկամներ իրար ձեռք կը տերեն և կը բաժանվեն, իւրաքանչիւրը սրտումը ասելով, «համա խարեցի հա»... Վայ այն մարդուն որ վաճառականի «Ինչ նոր խաբար» հարցին նրա սիրելի քամ. մասնաւոր հարցերից, կանցնի ընդհանուր հարցերին, նա այն ժամանակ մի այն տեսակ անհամբերութիւն ցոյց կը տայ քո խօսքերի վերջանալուն, իր մթնաժոր աչքերով մի այն տեսակ անշամակրական շարժողութիւններ կանի որ սասիկ կը փոշմանես քո սրբարմանքի վրա: Անգթութիւնից տեսնում ես միւս վաճառականը «տէր ողորման» ձգեց, ձգեց և մէկ էլ Մարգիսի քաղցը օրօրից շինքը Թուսցաւ, կամաց կամաց աչքերը խրեց, զլուխը քաշացրեց և յանկարծ վեր թռչելով մի քնաթաթախ դէս ու դէն նայեց, տեսաւ մուշտարի չը կայ՝ էլի սկսեց անմիջէ իր երկրագործիքը... գնաց, քիչ ծ-նոթ է, մոտեցիր նրան, աս ա՝ Մ., հազը պարապ, անգործ ես. ինչ-ա մի լրագրից գրիչ չես կարդում:

Եչ, ապրանքը խեր, կասի նա, որտեղից է այնքան ժամանակ, իմ գործը միմի չէնց լրագիր, գիրը կարդալն է, ով է այդքան ժամանակ ասել որ ես այդպէս բաներին ետեղից ընկնեմ:

Ընթերցող, զուցէ դու կը ծիծաղես այս տեսակ պատասխանի վրա, բայց նա ճշմարիտ է ասում. գիտես թէ նա ինչքան սնապանդ մտքեր ունի... Աստուած հեռու պահէ մեզ այդ տեսակ հոգսերից:

Գուցէ ձեզ պատահի տեսնել հարիւրից մէկ վաճառական որ լրագիր է կարդում, բայց գիտես թէ քանիսի կողմից նա արհամարհանքի է ենթարկվում: «Այշի, ասում են նրանք, բանդ գլխել ա (վիրաբանել է), գնա քեսաբրութիանդ յետեից, ուշդդ քու գործիդ պահէ... վաճառականն ինչ, ըանենց պեսների յետեից ընկնելը ինչ...» Գիտեմ այժմ վաճառականներ որ առաջ լրագիրներ էին ստանում, իսկ այժմ այդ խրատատուների խօսքով թողել են և այդ բիսմանեներին ընկերացել:

Վնաս չէ «Թող մեռնելիքը թաղեն իրենց մեռելներին»: Բայց երանի թէ նոր սերունդն էլ, որ դրանց շատերի որդիքը, եղբայրներն են, կարդալուն զերծ մնայ դրանց վարակից և թունաւոր ազդեցութիւնից: Գժամտդարար մտածում ես որ նոր, թարմ ոյժերից շատերը անգիտութեամբ պէտք է զոհվեն այդ խաւարասէր, խղճի և լուսաւորութեան թշնամիներին:

Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԳՆԱԹԻՑ գրում են, որ այդ փոքրիկ քաղաքը ունի երկու հայոց, երկու վրաց սկեսեցիներ. ունի հայոց երկուսա դպրոցներ, հաշարաբ, գասարան, ատիկանութիւն, կլուբ, որի մէջ ստացվում է հայոց մի լրագիր միայն «Մշակը» և ոչ ոք չ կարդում, որովհետև հայերէն լեզու իմացող չը կայ: Սգնախը ունի և գեղատուն, որի պահպանը, օգուտ քաղելով գեղատների այն օրէնքից, թէ ամենեղ սակարկութիւն անել չ կարելի, իր գեղերը շափազանց թանգ գնով է վաճառում. օրինակ, գեղի կապաւորների իւրաքանչիւր զուլեին ծախվում է 4 բուլտով, իսկ նրա գինը ամէն գեղատան մէջ որոշված է 1 բ. 20 կ., «Դեվչ ա բոչկա» կոչված գեղը, որ ամէն տեղ ծախվում է 2 բ., այստեղ արժէ 4 բ 80 կ. կամ 5 բ.: Աստ են գեղատան պահպանը իր այս տեսակ շարտանաշարութիւնները բեվիզներից ծածկելու համար, երկու տեսակ հաշուէ մատեաններ է պահում, մէկին մէջ նշանակում է իսկական գեղերը, միւսի մէջ նշանակում է այն գեղերը, որ իրը ստանում է:

—

«Кавказъ»-ը լրագիրը հաղորդում է որ սեպտեմբերի 1-ին Թիֆլիսի քաղաքային Դումայի մէջ նիստ կայացաւ, որտեղ ճանաչողների վիճաբանութեան առարկան դարձաւ կոմս Լորիս-Մելիքովի Թիֆլիսի մէջ պատասխանատու կերպով ընդունելու խնդիրը: Երկար վիճաբանութիւններից յետոյ, վճռվեցաւ 1) ընդունել կոմսին երկաթուղու կայարանի մէջ, 2) առաջարկել նրան Թիֆլիսի պատասխանատու քաղաքացու կոչումը, 3) փոխել Թիֆլիսի Աստամանեան փողոցը Լորիս-Մելիքովի անունով և 4) նշանակել 16 հազար ռուբլ կոմսի անունով երկու թեշալարտ ուսանողներ պահելու համար, մէջը Ս. Պետերբուրգի և միւսը Մոսկվայի համալսարանում, մինչև Թիֆլիսի համալսարանի բացվելը, իսկ այդ համալսարանի բացվելուց յետոյ յանկացնել այդ ստիպենդիաները նոր համալսարանին: Եթէ կոմսը մի որ և է պատճառով չը գայ Թիֆլիս, վճռվեցաւ կատարել յիշեալ կէտերից միայն երկու վերջինները:

—

Ռուսաց լրագիրներում տպվեցաւ հանդուգնական Բրօսով լեզուակցի կենսագրութիւնը: Նա ծնվեցաւ Փարիզում 1802 թվին և ունի շատ գրվածներ թէ վրաց և թէ հայոց պատմութեան և լեզուագիտութեան վրա: Բացի հայերէն և վրացերէն լեզուներից, հանգուցեալը գիտէր էր և ուրիշ ասիական մի քանի լեզուներին:

—

«Русскій Курьеръ» լրագիրը տպել է նորերումս մի առաջնորդող յօդուած մամուլի ազատութեան մասին: Լրագիրը խօսում է մամուլի ազատութեան այն կէտերի վրա, որոնք պէտք է գտնեան մամուլի օրէնքները վերաքննելու համար կազմված մասնաժողովի զրկաւոր պարագաներների առարկան: Դուս թերթը ուշադրութիւն է դարձնում այն բանի վրա, թէ որքան անսպասելապարար է շարունակել պահպանել օտարազգի լրագիրների և գրքերի համար ցենզորա և մրտուել լրագիրների մէջ այս կամ այն տեղեր, արգելել այս կամ այն գիրքը ընդարձակ մէջ, չը նայելով որ արգելված լրագիրները ռուսներեն կարդում են թէ նոյն իսկ Գերմանիայում, և թէ արտասահման գնալու ժամանակ: Եւ օտար լրագիրները ամբոխի մէջ չեն տարածվում այլ մասնչի են միմիայն բնակիչներին, ուրեմն ինչ հարկ կայ վախենալ նրանց ազդեցութեան հետևանքից մասնաւորապէս զարգացած հասարակութեան դրպեի վրա: Օտարազգի գրքերը, ասվացնում է ռուս թերթը, ինչպէս օրինակ նորերումս եղաւ «Նանա» բոմանի հետ, արգելվում են ընդարձի մէջ, բայց այնու ամենայնիւ թարգմանվում են ռուսերէն լեզուով: Օտար լրագիրների մրցանը միայն այն նշանակութիւնն ունի, ասվացնում է Մոսկվայի լրագիրը, որ մէջեղ է տալիս այդ պարագաներով բաղմաթիւ պաշտօնեաներին իրանց ապրուստը ապահովելու:

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 4-ին տեղվեց թատրական կոմիտէի գործունէութիւնը «Տէրէզա» դրամատիրոջ, որին մասնակցում էին բացի Դավիթ խանզադի զրաստաններից և Կ. Պոլսից նոր բերած Գարագաշեան երկու քոյրերը և ս. Մրնակեան: Հաստատութիւնը լցել էր թատրոնը և շատերն էլ կանգնած էին, մանաւանդ որ հասարակութեան մէջ տարածել էին, թէ Գարագաշեան քոյրերը նոր բարդ մէջ անցում նշանաւոր են և հոգակ ունեն, հասարակութիւնն էլ այդպիսի նախապարմանքով գնալով թատրոն, անհամբեր սրտով սպասում էր տեսնել այդ նշանաւոր արվեստուհիներին: Մեր նպատակը չէ մանրամասնարար քննելնան տակ ձգել և հաշիւ տալ բոլոր ներկայացման մասինները իր ժամանակին կը լինի, միայն երկու խօսքով կամենանք մեր փոքր հասկացողութիւնն տալ ընթերցողներին նոր եկած դերասանուհիների և գերասանների մասին: Փոքր քոյր Գարագաշանը երգեց, իսկ մեծ քոյրը և ս. Մրնակեան մասնակցում էին դրամային: Կրտսեր Գարագաշանի ձայնը շատ թոյլ է, այնպէս որ օր. Սիրանուշը նրանից ունէր ձայն ունի: Նա իր երգով և ձեւերով թարգմանվեցաւ նման է Ելիզաբեթինին, և նրա ձեւերի էլ երգում է: Մեծ քոյր Գարագաշանի մասին ասենք որոշ չենք կարող ասել, որովհետև սպիկան սատակի ձեռքած և փոսածներից էր և չը կայ մէջը որոշ տիպեր, միայն այս կարող ենք ասել, որ նրա խաղը բոլորվին սպասարութիւն չը գործեց հասարակութեան վրա: Իսկ ինչ որ վերաբերում է ս. Մրնակեանին, նա ծերի դերերի մէջ վատ չէ, բայց բոլորվին ձենը հաստատում, որ նա կարդանալ Աղամանեի դերերը խաղալ:

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ գրում են մեզ. հայ-կաթոլիկ պ. Ե. Մէլիքանցի յորդորագրով այս տարի մեր կաթոլիկ եղբայրներից շատերը իրանց աղջիկներին յանձնեցին լուսաւորականների օրիորդաց դպրոցները: Այդ մի գեղեցիկ օրինակ է ազգային միութեան, և մենք խորհուրդ կը տայինք զարդարների հոգաբարձութեանը հրաւիրել մի կաթոլիկ կրօնաւոր, որպէս զի հայ-կաթոլիկ աշակերտուհիները կրնան դասերը լսէին իրանց եկեղեցու քահանայից: